



Վիմա-սպարան Թ. ՄՆՏԻԿԵԱՆԻ — ԳԱՀԻՐԷ

“ՓԻՒՆԻԿ,,Ի ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին
- 1.—Տոհմային կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ուսում, նասիրութիւններ. Հայոց գաղթային հոսանքին վրայ շահեկան տեղեկութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2.—Արձակ եւ ոտանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու քարգրանութիւն:
 - 3.—Գիտական նորութիւններ, կես-ձանօք ժողովրդոց կեանքին ու բարեկէն մանրամասնութիւններ, հոշակաւոր երկրախոյզներու երկերէն քաղուած:
 - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
 - 5.—Կիսամտեայ ընդհ. քաղաքական կացութեան վրայ հոռու ու անփոփ տեղեկութիւններ:
 - 6.—Արտասանմանի եւ գաւառական քղրակցութիւններ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի Համար	Տարեկան	Փր. 10
»	Վեցամսեայ	» 6
Արտասանմանի Համար	Տարեկան	» 13
»	Վեցամսեայ	» 7
Կովկասի Համար	Տարեկան	բուրլ. 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կուսակցական ոգին.—Խ.	Մի ընդ ուղղախոհութիւն.—Պ.
Առ խաչեցեալն.—Ս. ԲԻԻՐԱՏ	Մահտութիւն.—Ս. Օ.
Չքօսական ժամանց.—ՎԱՀԷ	Կացութիւնը:
«Չ՛ յիշուի»ի միջազգայն.—Ս. Ճ.	Լրաբազ:
Լեոնտիանի մը Յուշատետրը.—ՀԱՅԿ ԼԵՒՈՆ	

Չեւազիրները եւ շէն դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգեր:
Նամակ, յղուած և բաժանորդագին պէտք է զրկել առ Տիար Ս. ԲԻԻՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE ՔԻՆԻՒՅ
INSTITUTION CENTRALE
LE CAIRE

ԵԳԻՊՏՈՍ
Յր.
ՏԱՐԵԿԱՆ... 10
ՎՆՑԱՄՍԵԱՑ 6
—
ԲԱԺՆԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է

ՓԻԻՆԻԿ

ԱՐՏԱՅԱՀԱՆ
Յր.
ՏԱՐԵԿԱՆ... 13
ՎՆՑԱՄՍԵԱՑ 7
—
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՊԼ. 5

Կ Ի Ս Ս Մ Ս Ե Ս Ց Հ Ա Ն Դ Է Ս


ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ս. ՏՄԻՐԻ

1 ՀՈՒՏԵՄԲԵՐ 1899

ԹԻԻ 13

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈԳԻՆ



արդ մը զլուսներ, քա-
րի պէս ամուր ու տա-
կառի պէս թափուր,
օրին մէկն ուղեցին
գործունէութիւն ցու-
ցընել, որպէսզի ապա-
ցուցած ըլլան իրենց գոյութիւնը,
որու վրայ տարակոյնները՝ տա-
կաւ իրականութեան և ստուգութեան
կը յանգէին: Արդ, ինչ ընեն, խոր-
հեցան հրապարակ նետել այնպիսի
խնդիր մը, որ բովանդակ արտասահ-
մանի հայութեան ջգերուն թելերը
թրթռացնէր: Ու պատգամները, Սև
ծովի եզերքէն արձակուած, կայծա-
կի արագութեամբ թռան, հասան ու
թունդ հանեցին սրտերը բոլոր անոնց
որոց մէջ կը պլպլայ դեռ յոյսի նշոյլ
մը, մեր կենսական հարցի նպաստա-
ւոր ելքին նկատմամբ: Այս պատգա-
մը, Գեղիեանին պէս չէր տարտաձ,

այլ մեկին ու բացարձակ. «Չ' յիշուի»:
Չ' յիշուի՝ անունը պատրիարք Օրման-
եանին, որ փոխանակ հակելու և պաշտ-
պանելու իր ժողովուրդը՝ իշխող բրո-
նապետութեան այլևայլ զրկողութիւն-
ներէն, փոխանակ քաջալերելու դի-
մուռը զոր ըրին արտասահմանի հա-
յերը՝ Լահէյ համախմբուած խաղա-
ղութեան համաժողովին, և վերջա-
պէս, փոխանակ զոնէ ձեռքի տակէ
ոյժ տալու հայ զաղթականութեան
ընտրած ձեռնհաս ու բանիմաց պատ-
գամաւորին, իր փափուկ ու զփուա-
րին պաշտօնին մէջէն յաջողութեամբ
գուրս զալու համար. ինչ բրած է,
զիտէք, սոսկալի հեռագիր մը քա-
չած է հոն, խաղաղութեան վեհա-
ժողովոյ նախագահին, թերևս — որով-
հետև այդ համբաւաւոր հեռագրին
պատճէնը չ' երեցաւ դեռ որևիցէ թեր-
թի մէջ, բան մը որ բնագրին գո-
յութիւնը չ' երաշխաւորեր — հետևեալ
հաւանական իմաստով. «Արտասահ-
մանի հայութիւնը չունի իրաւասու-
թիւն զիմում ընելու յանուն հայրե-
նակիցներուն, որոնք կ' ապրին այսօր
թուրքիոյ մէջ, Օսմ. կառավարու-

Թեան խնամոց ներքե... և այլն: Այդ հեռագիրը չուկէս և հիմ բռնելով՝ դիւրին էր բնականարար կարգ մը վրոյցներ ալ կցել, և Օրմանեանը ցեխերու մէջ թաթխել, ի հարկէ հաւատալի և կարելի ամբաստանութիւններով:

Փխնիկ իր վեցամսեակը բոլորելու պահուն, պարտք կ'զգայ նոյնութեամբ կրկնել իր ուղղութիւնն և նշանաբանն յատկանշող հետեալ սողերը.

«Անկախ խմբագրութիւն մը, զերծ անձնական փոքրութիւններէ և կուսակցային կիրքերէ ու ծաղրելի ընդհարումներէ, անաչառ քննադատի աչքով, ոչ թէ զաչացու աղանդամուլի մը յամառութեամբ, դիտել իրերն ու դատել ազգային շարժումները. բողոքել՝ հաստատուած զեզծումներու դէմ: Ժողովուրդը կեղեքողը, անոր եռանդն ու միամտութիւնը շահագործողը, ըլլայ ուսմիկ, ըլլայ տոհմիկ, դիմակազերծ ընել»:

Փխնիկ ուրեմն իր ուղղութեան հետեւելով, չէ կարող լուռ մնալ այսքան աղմուկ հանող խնդրի մը հանդէպ, զոր պարզելու և որուն հետեւորները մատնանիչ ընելու համար պէտք է ունենալ դատողութիւն զերծ ամեն կուսակցական նկատումներէ, —մինչ հոս կը պծպծան որդնալից ըզեզներ— զինուած՝ ժողովրդի իրական շահերուն ըմբռնումովն ու անխախտ համոզումովը. պէտք է նաև ունենալ արիութիւն, իրերն ու իրողութիւնները չ'բողարկելու, այլ յստակ, ճշգրիտ ու իսկական գոյնովը ներկայելու համար:

Նախ անոնք խնդրին պատմականը:

Ազեքսանդրիոյ Հայոց եկեղեցւոյն մէջ Պատրիարքի անուան յիշատակութիւնը զաղբեցնել կը արուի ժողովրդին միահամուռ հաւանութեամբը, և երկու կուսակցութեանց — Հընչակեան ու Գաշնակցական — համերաշխ գործակցութեամբը: Լա՛ւ. հոն չ'յիշուիր, ուստի պէ՛տք է Գահիրէի մէջ ալ ձեռնարկել յիշատակել չ'տալու համար այն անունը, որ ծանօթ հեռագրին տակ դրուած է: Սակայն դիտելի է թէ՛ Գահիրէի ժողովուրդը նոյն ձևով չ'սկսաւ, ինչպէս սկսան Ազեքսանդրիոյ մեր յարգելի զրացիները. հոն, պարզապէս թաղ. խորհրդոյ անդամներուն մեծ մասին համակրութիւնը կը վայելէր ձեռնարկն, արդար ըլլար թէ անարդար, մինչդեռ հոս, խելօք-Գաիթի մը՝ եկեղեցւոյն դուռը փակցուցած մէկ ազգով սկսաւ. ազգին վրայ, մենծ—ազա մը, կիրակի օր մը, զինւորներով պատել տուաւ եկեղեցւոյ դժբաղդ դուռը: Յաջորդ օրը հայկական սրճարանի անտանելի յաճախորդներէն պոռոտախօս յեղափոխական պարոն մը, նստած տեղը կը ցնցուի, կը բռնկի, կը փրփրի և կը փութայ իր արդար վայրոյթի թոյնը թափելու մէկ ազգու պաշտօնական բողբազրի մէջ, զոր ինք իբրև ներկայացուցիչ Գաշնակցական յեղ. կուսակցութեան, կը նետէ Տեղապահի երեսին, յանուն Գահիրէի հայ ժողովրդին, պահանջելով զաղարումը Պատրիարք Օրմանեանի անուան յիշատակութեան:

Այս ապուշ, անխմաստ ու ծիծաղելի բողբազրին դէմ կը պատասխանէ Տեղապահը թէ՛ որևէ կուսակցութիւն չունի իրաւասութիւն ժողո-

վրդի անուան տակ գիմնումներ ընելու և արդէն, միւս կողմէ, քանի մ'երկտասարդներ, ուրիշ գրութեամբ մը Տեղապահ Տ. Հօր կը բողոքեն այդ Դաշնակցական պարոնին արարքին դէմ, միևնոյն հիման վրայ: Խնդիրը կը կնճռոտի, թռուցի՛կ մը պէտք է, թռուցիկ մը, խեղճ ժողովրդին աչքը բացող թռուցի՛կ մը, և ամեն մ'աւելի, քանի մ'անդամ գրուելէ, աւրուելէ, նորէն գրուելէ վերջ՝ լոյս տեսաւ թռուցիկը՝ մանիչակ թանաքով, նուազկստ գրերով և մութ, յիմար ու ողորմելի շարագրութեամբ մը...: Այդ միջոցին, ձեռքէ ձեռք կը խլուէր թռուցիկը, որուն սակայն վիճակուած ճակատագիրը չէր այն, որուն համար յղացուած էր ու մարմնացած: Բովանդակութիւնը սին, ուռուցիկ ու բռնապսօսիկ, վանող ուժի մը տպաւորութիւնն ըրաւ ամեն զարգացած մտքերու: Եւ կուսակցութիւնը, շնորհիւ իր անշնորհ ու անճարակ դործիչներու(!) մտկոնողութեան, հեղհեռէ վայրէջ զլորումով մը, վարկաբեկ եղաւ ժողովրդի այն խաւերուն մէջ, ուր աւելի պէտք ունէր և կրնար թերեւ քաջալերութիւն գըտնել ի հարկին: Եւ դիւրին է հասկընալ, թռուցիկին արդիւնքն այդ եղաւ:


Քանի մ'օր վերջ, Ալեքսանդրիայէն տեղս կը հասնի նոյն կուսակցութեան գործիչներէն մին, որ վերջին հանրաժանութի գէպքերուն մէջ ճշմարիտ անձնութեան և յանդրգնութեան փորձը տուած էր իր վրայ և որուն սակայն այդ պարագան չ'կրնար արգարացնել իր յախուան ընթացքը զոր ունեցաւ այս խնդրին մէջ:

Սա կը համախմբէ համակրողներու շարք մ'իւր շուրջը, կ'սկսի աբգէն, իրաւագիտութեան բոլոր ծանօթ ու անծանօթ գէնքերն ի գործ կը դնէ համոզումի բերելու համար ժողովուրդը դէպ ի «չ'յիշուի» ի կենսական հարցը: Թեր ու գէմ կարծեաց փոխանակութիւն, գլուխներու բորբոքում, անձնական մեծ ու պզտիկ նկատումներու ընդհարում, այս ամենը կ'ըլլայ, մինչդեռ մութին մէջ, կուսակցական ոգին, ահաւնեքը կը կրճատէ ճիւղի ծիծաղով մը, և իր ուրուականը կը ցուցընէ միայն կուսակցամուլ ջերմեռանդներուն...:

Վերջապէս տեղւոյս ազգ. վարչութեան հանրագրութիւն մը ներկայեցու գաղափարը կ'ընդունուի, և անմիջապէս Ալեքսանդրիայէն կը բերուի արդէն պատրաստ հանրագիրը, զոր ժողովուրդը մատուցած էր տեղւոյն թաղ. խորհրդին: Ստորագրութիւնները հաւաքելու համար ո'չ այնչափ դժուարութիւններ կը ծագին. ժողովուրդն առ հասարակ համակիր կ'երևէր այդ ձեռնարկին, զայն գիտնալով զուտ ժողովրդական մի ձեռնարկ. և քանի մ'օրուան մէջ հանրագրութեան տակ կը գետեզուին 350ի չափ ստորագրութիւններ, որոնց աւա՛ղ, վերջէն հասկցանք թէ մէկ մասը կեղծ ու խարդախ էր, ինչպէս ցոյց կուտար Արշալոյսի մէջ տեսնուած խաչատոնական յայտարարութիւնը, որուն մէջ մոռցուած էր սակայն դիտել տալ թէ՛ ստորագրողներէն մին ալ Ա.Տիս-Ալպիսա կը գտնուէր. չէ՛ կարելի որ հեռագրով իր ստորագրութիւնը զրկած ըլլայ:

Խ:
(Շարունակելի)

ԱՌ ԽԱԶԵՑԵԱԼՆ



Արկեալ ի ծոց օթևանիս
 — Ի կենդանեաց ի դահլւան—
 Ասուսինեալ ի հովանիս
 քո և ի սուրբ պատուանդան
 Քառաթևիդ, մածեալ դիմօք
 Յաղերս անկեալ ողբագին,
 Հեղու՛մ ըզվիշտ և ըզմորմութ
 Փրկչիդ իմոյ ի բազին:

Ո՛ր բարձրացեալդ ի Գողգոթայ
 Նախատամօք, Տէ՛ր, ի յաչ,
 Մատենա՛լդ ի հեզ համրոյր Յուդայ,
 Հեղձմամբ մօր քո ի հառաչ.
 Որ ի հովտիմ Գեթսեմանի
 Մաթառելով ընդ Նիւթոյն,
 Որդիդ հըլու հօրդ հրամանի,
 Ջբաժակն արբեր մահաթոյն:

Գիտե՛մ, այո՛, նանիր են իմ
 Տառապանաց կեանք յաստիս.
 Այլ մեռանի՛լ, ո՛հ, վարանիմ,
 Ձի հրճուիմ դեռ յառոյգ տիս.
 Ձիմ ապտ ի ծեռս անօրինա՞ց
 Աւանդեցից յետին շուեչ.
 Ձև ըզբարձունս իմ հայրենեաց
 Տեսեալ անկա՞յց անմըռուեչ...

Քա՛ւ, փրկիչդ իմ, քա՛ւ ինձ լիցի
 Դողալ մահուան յանդիման,
 Այլ, եղո՛ւկ զիս, զի ըմտրեցի
 Կանուխ՝ կենաց ըզպայման.
 Բիւրի՛ցս եղուկ, զի ո՛չ հաճբեր
 Անձն իմ սիրոյն ընդ ոգոր.
 Ձի վաղ բարձի զբռն անըմբեր,
 Ըզկենցաղոյս աղցաւոր.

Իմ է՛ միւսս ես հոգեհատոր
 Ի հայրենիս անդ ի տան.
 Ջայգ և ցերեկն արտասուաթոր,
 Դէտակն իմու՛մ զալստեան,
 Ե՛մ իմ կրկին զուարթածաղիկ
 Ուստերք ի տիս մանկութեան,
 Որոց ի յուշ խարշին աղիք
 Հօրս արկելոյն ի զնդան:

Ապաւէ՛մ իմ, Յո՛յս իմ, Յիսու՛ս,
 Ժշմարիտ Սէր անըսպառ.
 Տե՛ս, ի՛բր հեղու՛ն աչքս աշտասուս.
 Դու և դադար չի՛ք ի սպառ.
 Ո՞չ դու ցասմամբ կշտամբէիր
 Ձորս ո՛չ մանկուտոյն թոյլ տային
 Գալ առ փրկիչդ որ սիրէիր
 Ձմոսին ըզՍէր երկնային...

Ուստերք իմ արդ անօգնական,
 Հանգոյն որբոց լալագին,
 Հեռի՛ զրկաց գորովոյս կան,
 Յոյց սէր կղկաթ կաթոզին
 Հեծեմ կոծեմ ես չարարաստ
 Յաւազակաց ամբոխի.
 — Արք անօրէ՛նք և ամըզաստ—
 Անձն իմ ըստէպ ամբոխի:

Ի՛ իմ և ա՛յլ յաստիս՝ փափագ
 Յոյր տոչորիմ ես ի բոց.
 Ձայրանայ յիս հոգիս անյագ
 Յաղէտս այրեաց և որբոց.
 Սրբազան սէր հէք հայրենեաց՝
 Բանտէ ի բանտ վարէ զիս,
 Յազատութի՛ւնն եմ անծկայրեաց,
 Յայն հրդեհի յար հոգիս...

Տոհմ իմ եղև երբեմն ազնիւ,
 Ազնրւագոյնն ի յազանց.
 Թաւալեցաւ բաղդիմ անիւ,
 Ո՛չ ևս է տոհմ զերազանց.
 Անկա՛ւ ի գէր իւր գահոյից,
 Շիջա՛ւ արեգն իւր փառաց.
 Աւա՛ղ, մակա՛ն, թագ արքայից
 Բեկա՛ն, յանարգ ի մոռաց:

Մի՞ անիծեալն իցէ ի քէմ
 Այս ազգ զրկեալ արամեան,
 Բայց ո՞չ այս ազգ էր որ ըզթէն
 Լոյծ ըզվրիժուցդ աստուածեան.
 Ո՞չ ինքն ի սէր քո, Տէ՛ր անմահ,
 Բիւրաւորս ետ նահատակ.
 Ո՞չ ինքն ըզթագ կորոյս և զգահ
 Յանուանդ յաւերժ յիշատակ...

Աղէտք ազգիս ըզտիւն ի բու՛ն
 Ալեկոծեն ըզսիրտ իմ,
 Ըզցայգն յաչաց խոյս տուեալ քուն:

ի մահմիս խռով խըլըըտիմ.
Յորժամ մըտօք սլացեալ ի վեր
Գահավիժեալ մերթ ի վայր,
Հայլիմ յԱշխարհն արեաց յաւեր,
Յերկիրն հայոց Գըախտաւայր:

Շամթահարեալ անձն իմ գոչէ,
Աւանդելով յետին շումնչ.
«Կորըստական այս ալ գո՛չ է.
«Ազգք յետաւսիտք անհետիմ.
«Այո՛, այո՛, ո՛չ ամվախմամ
«Են՛ չարչարանք հայրենեաց,
«Յարքայութեանն ի սոխ խրախմամ
«Փրկիչդ ըզմեզ հրաւիրեաց»

Արդ, ի բարձամց սրբոյ խաչիդ
Հայեաց, փրկիչդ աշխարհի,
Գետնամածեալ կամ առաջիդ,
Ուր մեծութիւն խոնարհի.
Ընդ երևել շողից արփւոյց՝
Մերժի՛ գեշեր, ծագէ տիւ,
Համ ի բամտէս, տար, ճէ՛ր, յիմ բոյն,
Ձիս, վարուժամ խոց մետիւ:

2/10/92

Ս. ԲԻՒՐԱՏ

ԶԲՕՍԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ



Կարծին ու միջակին մէջ տատանող
Կրակալով հասակ մը՝ որ 50-55 տա-
րիներու բեռը կը կրէ, ցած ու բարակ
ճիտով մը երկու վերամուտքիկ ուսե-
րուն միջև զետեղուած գլուխ մը՝ որ
աջ ու ձախ ճօճումներով օրուան 18
ժամը գետին կը նայի՝ թերևս օր մը
հողին հետ գիրկ գիրկի պառկելու
ճակատադրային գազափարէն թերա-
դրուած — էն աչքի զարնող գիծերը
կը յօրինեն Հաճի Սեփան աղայի ֆի-
զիքական կազմին: Գաւառացի մըն է
ինքը, տուն սեղ թաղանի ու կրակի
տուած ու միտքի վրայ նստած, մին
այն հաճի աղաներէն որ տեսած ան-
ցուցած օրերնին պատմելու համար
եթէ մարդ չգտնեն, իրենց շունին
կամ կատուին կը հասկցնեն ամեն
անգամ որ սակարի կամ կանծած ա-

պուխտի կտոր մը նետեն անոնց առ-
ջև, իրենց երբեմնի լիառատ ճոխու-
թեան ցաւալի վերջուշումով: Մին այն
արդահատելի տիպարներէն որ իրենց
ինկած վիճակին մէջ իսկ արիւնտա բե-
րուն մը ու սե սիրտ մը ունին՝ բաժ-
բասանքի ու քուլթեան ջրվէժներ
պուլթկայող, և սրանք իրենց ստոր
բարիտութիւնը գիտեն չտարել բարե-
պաշտութեան սնդոյրով ու մարդու
չին տար Աստուծոյ արքայութիւնը:

Եւ ստուգիւ շատ ստուածափախ
է մեր Հաճի Սեփան աղան, առտու
իրիկուն անպակաս է եկեղեցիէն և
եթէ երբէք պատահի որ աւարտած
ըլլան ժամն ու պատարագ, աւելորդ
չսեպեր քանի մը շրջաններով ուրբաւ
ազօթատեղիին շուրջը՝ ազօթքի և ա-
նէժքի խառնուրդ մը միմնջելով քթին
տակէն:

Թերևս ի վարձատրութիւն մեր
հաճի աղայի ծայրայեղ շեմուռանդու-
թեան՝ երկինք օրհնած են անոր ա-
մուսնութիւնը, պարզեւելով զոյգ մը
հրեշտականման զուակներ — ինչպէս
ինք կը գտնէ — մտնչ մը և աղջիկ,
երկուքն ալ՝ ի չափ հասեալ արդէն:

«Օրերնին եկեր հասեր է, պէտք է
մէյմէկ նշանած գտնել» կը միթմիթայ
Հաճի աղան, այս է իր սեւեռուն դա-
ղափսրը, ու հակառակ իր վատոյժ
ժունկերուն՝ որ տարիներու բեռէն
աւելի անդորժութեան ախաէն կը
կթոտին, փէչը զօտին զարկած, ինչ-
պէս կ'ըսեն, օրն ի բուն տունէ տուն,
խանութէ խանութ, չուկոյէ չուկոյ
կը վազէ բարեկամներու կամ հայրե-
նակիցներու քով, աղջիկտեսի կամ
սղատեսի, միշտ համրիչը ձեռքը, որու
հասիկներուն զոյգ կամ անզոյգ համ-
բանքէն բարի կամ չոր դոշակու-
թիւններ կը հանէ իր աղջիկտեսի ար-
չաւանքներուն յաջողութեան նկատ-
մամբ:

Եւ օրովհետեւ ժամանակին բաւա-
կան փայլուն գիրք մը ունեցած է
Հաճի Սեփան աղան իր բնագաւառին
մէջ, ուր որ երթայ՝ քիչ շատ սիրա-

լիւ ընդունելութիւն կը դանձ, և ահա
 դավեաններու յորդաօտա հեղեղ մըն
 է կը հասի Հաճի աղային բերնէն և
 իր հրեշտականման զոյղէն փառքն ու
 գեղեցկութիւնը կը զիւցազնեղէ ամբ
 բողջ Իլիական մը յերկարելով՝ միենոյն
 ժամանակ ջանալով բամբասանքի,
 զրպարտութեան և սառութեան տա-
 րափ մը տեղալ ուրիշներու գլխին՝
 անշուշտ իր աննման ու չքնաղաղեղ
 զոյղը առաջ քշելու և անոր արժա-
 նիքը տւելի բարձրացնելու համար:

Հաճի Սեփոն աղա իր դաւաճայիլի
 ըտ երևոյթին խելօքիկ ու համես-
 տունակ նկարագրին շնորհիւ յաջողած
 է գրաւել սիրաը բարեմիտ ահրապա-
 պայի մը, որու խոցը կ'այցելէ ամեն
 օր՝ թէյի հեշտորոյր շոգիներու աղ-
 դեցութեան տակ օրուան տեսածը ու
 լրածը պատմելու:

Այն պարանային որ Հաճի աղային
 աչքը խածած է երիտասարդ մը կամ
 օրիորդ մը, կէս մը իր միտքը հառ-
 կըցնելէ յետոյ անոնց ծնողաց՝ առանց
 ժամանակ կոտանցնելու տէրպապան
 անոնց ետեւէն կը հասցնէ, դարձը կար-
 զաղբելու համար և երբ մերժուի լա-
 նաւոր կամ ոչ-բանաւոր պատճառով
 մը, ա՛լ տեսնել պէտք է Հաճի ա-
 զան որ կը վրովրի, կը զայրանայ, օրհ-
 նած բերանը կը բանայ Պանդորեան
 տուփի մը պէս սրկէ հեղեղանման
 դուրս կը ժայթքին անլուր նախաախնը,
 լուտանք, հայհոյութիւն ընդդէմ իր
 առաջարկը մերժող օրիորդին կամ
 երիտասարդին, անոնց ծնողաց ու ամբ
 բողջ անցեալ ու ապագայ սերունդին:

Սակայն այն օրէն ի վեր որ մեր
 խնամի Հաճի աղան՝ իրեն փետոյ ըլ-
 լալ մերժող երիտասարդի մը կողմէ
 ասպետական ապտակ մը ընդունեց
 — այսպիսիներուն՝ գործնականը տւելի
 պերճախօս է — ա՛լ վճռած է վազ
 անցնիլ իր զոյղը նշանելու սելիսայէն
 ու սկստան ախպային վրայ գնելով համ-
 բերել մինչև որ իր պաշտելի զոյղը
 ինքն իր ձեռքով կարենայ գանել զ-

լիւ զոյղ մը ու այսպէս պատկել իր
 ծերութեան օգերու անուշ խաէայր:
 ՎՍՀԵ

“ՉՅԻՇՈՒ, Ի ՄԻՋԱԴԵՊԸ

Աղգային վարչութեան և հասա-
 րակութեան մէկ աննշան մասին միջև
 վէճը՝ Օրմանեան Պատրիարքի անու-
 նին չի յիշուելուն առթիւ՝ յանգեցաւ
 —ինչ որ արդէն կ'սպասուէր— ցոյ-
 ցի պէս բանի մը որ տեղի ունեցաւ
 եկեղեցոյն չըջափակին մէջ քանի
 մը միամիտ սղորմելիներու կողմէն:

Այդ ցոյցը այնքան ծիծաղելի, ա-
 նիմաստ և յիմար է որքան փասա-
 կար՝ զայն կատարողներուն համար
 նախ՝ և յետոյ ձեռքի տակէ գրգռել
 սուղ ցաւագարներուն համար:

Խոռովութեանց հետեանքով քսանի
 չափ անմեղ հայերու (որոց մէջ հրէայ
 մըն ալ) յանկարծակի և գիշերով
 ձերբակալումը իրենց պատկանած
 ազգութեան դէմ՝ նախատինքներով՝
 ճշմարտապէս վիրաւորիչ աղգային
 արժանապատուութեան համար: Պա-
 տարիանատուութիւնը կը ծանրանայ
 գլխաւորաբար ցուցարարներու վրայ
 և մասամբ աղգ. իշխանութեան
 վրայ, եթէ իրաւ է որ ուղղակի կամ
 անուղղակի կերպով թելադրած է
 այդ բաւական ծայրայեղ միջոցը:

Մաղթենք որ 17ի դէպքը առաջինը
 և վերջինը ըլլայ, որուն կրկնութիւնը
 օտար և բնիկ հասարակութեանց առ-
 ջև կրնայ արդարացնել այն կառկա-
 ծը որ անիրաւօրէն կը ծանրանայ ամբ
 բողջ հայութեան վրայ՝ իբր խոռ-
 վարար, աղմկայոյզ, հասարակաց
 կարգին դէմ ըմբոստ տարր մը նոյն
 իսկ այնպիսի երկրի մը մէջ որպիսին
 է Եգիպտոսը, ուր բռնակալութեան
 խաւարոջին օրերը այլևս անցեալին
 պատմութեան կը պատկանին, և ուր
 ընդհակառակը, շնորհիւ ախրող ա-
 զատութեան ու հաւասարութեան՝

ինչ որ հայկական իղձերուն ամբողջութիւնը կը կազմէ, պէտք էր միակ նպատակ ունենալ ազգային, մութ-ւորական ու անտեսական խաղաղիկ զարգացումը:

Անշուշտ ազգ. իշխանութիւնը խոհեմութեան ապացոյց չը սուտ այս ինդրոյն առթիւ: Պարտաւոր է սեէ լուծման մը յանգիլ կարելի բոլոր խտրադասութիւններէ միջոցներն ի գործ դնելով, և ոչ թէ՛ սպառնալիքի քիչ մը չափազանցուած և անստոյգ այմուկներու վրայ, շուտափոյթ զիմել կառավարութեան աջակցութեան, իբր զերագոյն ապաւէն մը, ծպտեալ ոտտիկաններ կամ չափուչներ բերելով եկեղեցիին շրջափակը, ինչ որ կարծեմ, կրօնական զգացումները վիրաւորելու կամ մոլեռանգութիւնը զըզոտելու հանգամանքն ունի, և ինչ որ թերևս այս պատճառաւ իսկ, խուժութիւնը փութացուց: Պէտք է զիտնալ որ կաշածու՛մ՝ տարածու՛մ ըսել է, ճշմարտութիւն մը որ ժողովուրդներու կեանքին պատմական փորձառութեան վրայ հիմնուած է: Պիղմարբի զիւնապետութեան օրով — ամենէն վայրագ ու ահաւոր հակառակորդը ընկերական արդի կարգին փոփոխման դէմ — զերման ընկերվարական ընտրողներու թիւը 500,000էն 2,500 հազարի բարձրացաւ երկու տարուան չնչին ժամանակամիջոցի մը մէջ: Ծայրայեղօրէն ազգու միջոցները, մինչդեռ ամեն յոյս կայ, յարաբերաբար զոհացուցիչ արդիւնքի մը յանգելու, ուրիշ բանի մը չեն ծառայեր բայց եթէ զգուհներուն թիւը աճեցնելու, հակակրութիւնը ընդհանրացնելու, խնդիրը կնճռոտելու, և հետևաբար, ինչպէս մեզ զբաղեցնող պարագային մէջ, բանի մը վարձուած կեղծ յեղափոխականներու հետապնդած մաքիավէլական գիտումներուն կամ անխիղճ հաշիւներուն յաջողութեան նպատաւար տարրեր կը հայթայթեն: Պէտք է, սկզբունքով, շափազանց գործնական միջոցները,

ինչպէս են ոտտիկանական ձերբակալումները, վերապահել բացարձակապէս յուսահատական պարագային:

Բայց եթէ ազգ. իշխանութիւնը այս մասին բնաւ համաձայն չգտնուեցաւ խոհեմութեան կանոնին՝ իր մերժումը հանրագրութեան պահանջումներուն գոհացում տալու չկրնար նըկատուիլ իբր իրաւունքի բնաբարում մը, ինչպէս կ'ուզուի ժողովրդին հատացնել:

Իրաւունքի տեսակէտով Օրէնքը ընդհանուր կամքին արտայայտութիւնը պարտի ըլլալ: Օրէնքը, կ'ըսէ Մժնութեաքիէօ, իրաց բնութեան անհրաժեշտ վերաբերութիւնն է. արգարե պէտք է որ Օրէնքը զգացողական երեակայութեան առելի կամ նուազ գեղեցիկ արտադրութիւն մը չըլլայ, այլ, ճիշդ ինչպէս բնական օրէնքները՝ պարտի կատարելապէս պատշաճիլ միջավայրի պայմաններուն, ժամանակի ոգոյն ու պահանջումներուն, իրական ընդհանուր պէտքերուն, բարքերուն, սովորութեանց ու աւանդութեանց: Այսպէս է որ, տգէտ, կոյր, անբարոյական ժողովուրդներու մէջ, Օրէնքը՝ մասնաւոր խմբակի մը կամքն է, — և պարտի ըլլալ: Այսպէս է որ ընդհակառակն, այն երկիրներուն մէջ որ բարոյական գիտութեանց լոյսին և ազատական գաղափարներու անգիմադրելի հոսանքին շնորհիւ հանրային գիտակցութիւնը կամ ժողովրդական ինքնաճանաչութիւնը արթնցած է, Օրէնքը, իրաց անհրաժեշտ ուժովն իսկ, ընդհանուր կամքին արտայայտութիւնը կը գտնուայ:

Գալով մեզ՝ հայ ժողովուրդը ինչ բարոյական ու մտաւորական մակարդակի մը հասած է: Ինչ ձև պարտի ունենալ ազգ. ընդհանուր վարչական կազմակերպութիւնը: Ճիշդ է այն գատաստանը զոր ըրաւ Մահմանագրութեան վրայ Ալի փաշան — ամենէն մեծ պետական մարդը զոր թուրքիա ունեցած ըլլայ երբէք — ըսելով թէ՛ քառակուսի անիւ մըն է ան:

ինչ որ ալ ըլլայ այս հարցերուն պատասխանը, իրականութիւնն այն է որ հայ ազգը կը վայելէ այսօր — կամ աւելի ճիշդը՝ մինչև Սահմանադրութեան վերաքննութիւնը — կրօնական ու զստ ազգային ներքին ինքնօրինութիւն մը որ սակայն, ի չգոյէ նիւթական ուժի տմուր խարիսխի մը, արուեստական ու անուանական է։ Ռենի Սահմանադրութիւն մը — ազգային կեանքին միակ գործիքը — որուն հիմնադիրները 1789ի Ֆրանսական զազափարներով անած միտքեր՝ ազգային կազմակերպութեան ծանր ու փափուկ գործին մէջ առաջնորդութեան անմահ Ռուսոյի նշանաւոր սահմանէն։ Օրէնքի մասին, այն է ժողովրդին վեհապետարխիւն։

Ուրեմն, բխելով ժողովուրդին կամքէն, ազգ. ունէ իշխանութիւն պարտի խոնարհիլ նոյն կամքին առջև։ Բայց ասոր համար անհրաժեշտ է որ եթէ ոչ բացարձակ ամբողջութեան՝ անուազն յարաբերական մեծամասնութեան մը իղձերը կամ շահերը ներկայացնէ այդ կամքը, և բաց ասկից, պարտի օրինաւորութեան շուրջ պայմաններով ընկերացած ըլլալ։ Պէտք է որ ժողովուրդը, նախաձեռնութեամբ, առաջնորդող դասին (խմբագիր, ուսուցիչ, ազգային պաշտօնեայ) ի մի վայր գումարուի. պէտք է որ, ձեռնհաս ու փորձառու անձերուն կտրածիքները արտայայտուին, խնդիրը մեկնուի, լուսաբանուի, բացատրուի ժողովրդին, առանց յետ-մտածումի, (απειροπειρα) անկեղծօրէն, և այսպէս, համոզուած ու զիտակից, ժողովրդին կողմէն ընտրուի պատգամաւորութիւն մը որ բաղկացած ըլլայ վստահելի, պատուաւոր, կարող, առանց կուսակցական գոյնի, փոքր ի շատէ ընկերական զիրքի աէր անձերէ։

Արդ «չը յիշուի» ի հանրագրութիւնը այս պայմաններէն և ոչ մին կը լրացնէր։ Նախ, զայն պատրաստողները կը պտտականէին այն յեղափոխական կուսակցութեան որ մինչև

հիմա իր ոճիրներովը միայն ծանօթ է և որուն ծրագիրն է, ինչպէս զիտէք, պոմպոլ թուրքիան, Ռուսիան և մասնաւորապէս Հայաստանը աւերակ զարձնելէ յետոյ, հայկական երկնային կայսրութիւն մը հեմնել — անվերջանալի բացազանչութիւններով, Շարժումի մէջ հայհուչներով և մանաւանդ Օրմանեանի անունը յիշել չը տալով եկեղեցիներուն մէջ որոնց ամենագոյշն հաւատք չեն ընծայեր։ Երկրորդ՝ զայն ստորագրողներէն շատեր — բաց ի քանի մը անձերէ — երբէք համոզուած կամ զիտակից չէին իրենց ըրածին, այլ սուտ ու փուտ խօսքերով խաբուածներ էին և ոմանք ալ ստորագրիցին անտանելի մարդոց ձանձրացուցիչ ներկայութենէն ազատելու համար միայն։ Յետոյ և վերջապէս՝ պատգամաւորութիւնը որ հանրագրութիւնը ներկայեց՝ կազմուած չէր, ինչպէս պէտք էր, ստորագրողներուն միաձայն հասնութեամբ, այլ ինքնակոչ, յանձնագաստան, խօսել չգիտցող (բաց ի մէկ երկուքէն) անձերէ, որոնք, ստոյգ տեղեկութեանց համեմատ, սկսած են անմիջապէս և առանց պատճառի վիճարանիլ, հակասական, զիրար անպատուող, տղայական խօսքեր ընել ժողովականներուն։

Յետի, ո՛չ պէտք է զարմանալ և ո՛չ ալ անիրաւութիւն մը նկատել որ ապօրէն հանրագրութիւն մը արհամարհատ մերժումի մը միայն արժանացած է։

Սակայն, խուլարարներուն և ազգ վարչութեան միջև կայ հանդարտ ականատես մը, անկողմնակալ ու անաչառ դատաւոր մը. հանրային կարծիքն է այն։ Հայ ժողովրդին յատկանշական նկարագիրն է գործնական սգին, ողջմտութիւնը, և ապահով ենք որ իր արհամարհանքի և արգահատանքի արտայայտութեամբը միայն կը պատասխանէ կարգ մը ունայնամիտ, տգէտ, իմաստակ, զիշերային միթինկիներուն փքուուոյց,

անամէջ, պոռոտ, ծիծաղելի բացազան-
չութեանց որոնք յիմար նպատակն
ունին խռովութիւնը հրահրելու և ո-
րոնք իրենց նման ազգազնաւ շովէն-
ներուն միամիտ ծափերուն միայն կըր-
նան արժանանալ:

Ա. Ճ.

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԽԱՂԵՐԸ

Նորապսակ հարսին ծնողքն ու աղ-
գականներն ա՛լ չէին տեսնուեր, պա-
ղովիւն մ'ընկած կը թուէր մեր և
իրենց միջև, յարաբերութիւնները
գաղբոս էին. մայրս կը պատուիրէր
որ չ'երթայի Տիկին Թուրքմանայի տու-
նը, ու ես բռն մը չէի հասկնար այս
խորհրդաւոր փոփոխութենէն:

Օր մը, մեր տունն սկսան հայս շա-
ղիւ. բայց այս անգամ, թթուեցնելու
համար փաթթեցին հոյսն ու տուք
պահեցին — ինչ որ անսովոր է բոլոր
Ձէյթունցոց համար որք անխափ
կ'ուանն անխմար հաց — Հայսն արդէն
խմորուած էր, փոքրիկ հացեր շինեցին,
իւղի մէջ տապկեցին, հուցկնիւր անու-
նը կա տային այդ համեղ խմորեղէնին
զոր, կ'ըսէին, խնամիին տունը պիտի
տանէին ուրիշ ընծաներով: Վերջապէս
մայրս հաճեցաւ ինձ իմացնել թէ Բա-
րեկենդանն է եկեր:

Տանիքները ծածկուեցան ամեն հա-
սակներէ ու երկու սեռերէ, ես ալ
կեցած կը գիտէի մեր տան տաշի
տանիքը, որ ժողովուած էին բոլոր
դրացիք, այր ու կին, ծեր ու մանուկ,
կոյս ու պատանի: Օղը քիչ մը ցորտ
էր, բայց արևը՝ փայլուն. ամեն անե-
րուն առջև կեցած էին կանայք ու
կուսանք. տանեաց վրայ կը խաղային
ձերունիներ ու երիտասարդներ: Ձը-
ւարճալի էր տեսնել աղևորներ, որ
թխաղեղ երիտասարդաց հետ կը մըր-
ցէին: Դիտող դեղեցիկ սեռին աչքե-
րը՝ սովորաբար յառած կը մնային

18-20 տարեկան կարիճներու վրայ:
հոն, իրենք իրենց կ'ընտրէին իրենց
սրտին սիրածը, իրենց տաղաւան:
Սրտի նշանախօսութիւնը հոն կը կա-
տարուէր: Տեսնել պէտք էր կայտաւ
երամբ պատանեաց, որք իրենց սիրա-
ծէն սիրուելու յուսով արիւն քրափնք
կը թաթխուէին, աւելի եռանդով կը
խաղային, անձնիւր որ ջանալով յաղ-
թելու հակառակորդին: Քաջութիւնը
կը փնտռուէր հոն ու ըսկ քաջութիւնը,
որ շատ սուղ էր, որովհետեւ վարձատ
րութիւնն էր ճամարիտ սէրը, զոր գի-
տող կոյս մը կ'ընծայէր ի ծածուկ-
եա այն ատեն հաղիւ հնգամի մանկիկի
մ'էի. վէրջէն, շատ վերջէն հասկցայ
թէ՝ Բարեկենդանի խաղը՝ մեր ըն-
նականաց նախասիրած ու չքնաղ ա-
ռիթներէն մին է, որու շնորհիւ՝ ան-
ծանօթ քաջորդի մը, կը յաջողի զինք
ծանօթացնել և այսպէս ստանալ իր
կարծութեան հատուցումը: Այսպէս այդ-
խաղը կը շարունակէր մինչև իրիկուն:
Ժամը մէկ անգամ խաղը կը փոխուէր:

Ձէյթունի լեռնականները հետե-
եալ խաղերը կը խաղային ընդհան-
րապէս:

Խաղաշողները՝ հաւատար թուով կը
շարունակէին առ դէմ, տանեաց եր-
կու ծայրերը. մէկ կողմէ կ'արձակուի
մին, որու վրայ կը դրկուի միւս կող-
մէն ուրիշ մը, և յանկարծ կը յար-
ձակին իրարու դուայ, քիչ մը կը բռ-
նուին իրարու հետ, վերջապէս զօրե-
զագոյնը կամ աւելի ճարտարը յաղ-
թական կ'ենէ, ընդքարչելով ու բե-
րելով հակառակորդը մինչև իր կողմը:
որ դերի կը մնայ պարտեալը, որ
լեռնցոց բարբառով կը մեռնի. ա՛լ
իրաւունք չունի մասնակցելու այն խա-
ղին և կ'ստատէ մինչև որ ուրիշ տե-
սակ խաղ մը յաջորդէ: Այս խաղին
անունն է Տիղիլար: Եթէ մէկ կողմը
մարտիկ չ'մնայ, խաղը վերջացած կը
համարուի, ու նոյն խաղը կամ ուրիշ նոր
խաղ մը կ'սկսին նորէն:

Նոյն մարտիկները, երկու մասի բաժ-
նուած, մէկ մասը կը շարուի քովէ

քով, բոլորաձև, մինչդեռ միւս մասը կը փորձէ, առանց սակայն հակառակորդ մասի մէկ հսկողէն զարնուելու՝ ցատքիւ հեծնելու բոլորաձև խումբին վրայ. ամենքն ալ անխանգ հեծնելէ ետք՝ կ'ենեն խեղճերուն ուսերուն վրայ կը բարձրանան, թե թեի տուած՝ երգեր կը կանչեն, երգեր բոլորն ալ ռազմաշունչ, մեծ մասը թրքաբարբառ, այնուհետև կը փչին կ'ընկնին իրարու վրայ խառն ի խառն: Այս խաղը կը կոչուի Չարագսան:

Երբ խաղերէն կը ձանձրանային, Դիմացի ճամբան կ'երթային գնդակընկէց հեռաւորութեան մը մէջ, կը տնկէին նշան մը, զոր զարնելու համար կարգու կը գնդակակոծէին. նշանահարը՝ Բարեկենդանի հերոսը, օրուան առիւծը կ'ըլլար: Այս հանգէսներն ու խաղերը կը տեէին մէկ շաբաթ:

Այդ ընդհանուր ցնծութեան պահուն, երբ մայրերն իրենց չափահաս քաջ որդիներով կը պանծային. երբ նորաստի հարսներ, իրենց նրբաթիւլ քօղին տակէն ժպտաներ կը թուցնէին իրենց նորապսակին տարած յաղթանակին համար. երբ ամօթլեւած ու կարմրայտ աղջիկներ, իրենց խօսնայր պատանին զխաղով զմայլուն՝ կը վառուէին թագուն ու բոցանուտ զգացումներով. երբ — պարագայ որ Բարեկենդանի շուքն ու փայլը կը բազմապատկէր — խորշովերես պառուներ իրենց բերնի մէկ երկու գեղնած ախուաները ցոլացնելով կ'արասայտէին իրենց ներքին երանութեան ու գոհունակութեան գիտակցութիւնն՝ ի տես իրենց սպիտակահեր պատկառելի ամուսնուն, որ կայտառ երամի մը մէջ նետուած, կը նմանէր վշտաբառ արիւնքի մը, որ կը ծփծփի կապուտակ ճանչազգեստ ծովուն երեսը...: Երբ վերջապէս, ծեր ու պարմանի, կոյս ու կին անխտիր կ'զբօսնուին աչքով ու մարով, սրտով ու հոգով, ափով, տանիքին մէկ անկիւնը կ'ծկուած, ո՛չ այնքան տարիքոտ կ'ին մը, թաշկիծակը

ձեռքին, կը սրէր արցունքի խոշոր կաթիլներ, որ կը գլորէին երեսն ի վայր, վշտերէ ու հոգերէ գեղնած ու կնճռտած: Մայրս քոյս էր, կամացուկ մ'ըսի՝ ախանջին. «Մայր, տե՛ս այն կինն ինչո՞ւ կուլայ», նայեցաւ մարս ու գլուխն երեքցնելով՝ ամուր մը գրկեց զիս, սպառաւ ու ըսաւ. «Խեղճ մայր մ'է, իր որդին կ'ուլայ, 21 տարու որդին, որ հերու հոյն իջաւ», Ապուշ ապուշ երեսը նայեցայ ու ըսի. «Թո՛ղ չ'իջնէր, ի՛նչ մայր է եղեր որ աղան հողին մէջն է՝ թաղեր, թո՛ղ գուրս հանէր», Մայրս՝ մանկային պարզամիտ առարկութեանս վրայ ժպտելով՝ համբույր մ'ալ գրծչաց երեսիս ու թեէս բռնելով՝ տարաւ զիս մեր տունը:

Կարելի՞ է երբէք մոռնալ Բարեկենդանը լեռնականաց ու խաղը, մանաւանդ արցունքը սրբող այն կինը, որուն այն պահուն կրածներուն արժէքն աւելի կրնամ գնահատել հիմայ.

29/9/93
 ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ
 (Շարունակելի)

ՄԻ ՔԻՉ ՈՒՂՂԱՆՈՂՈՒԹԻՒՆ

Եթէ չես ուզեր ուրիշէ կառավարուիլ, դու թեզ կառավարէ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՑ

Ազեքսանգրիտ հրատարակուող Էճիքըն Կազեթի Մեպտ. 19 և 20 թիւերուն մէջ կը կարգանք թէ ամսոյս 17ին Գահիրէի եկեղեցւոյն մէջ եղած ցոյցին շնորհիւ ձերբակալուած անձինք ազատ ձգուած են հետեւալ ազգարարութեամբ.

— Եզրկտոս թուրքիոյ միակ մասն է, ուր դուք ազատ և հանգիստ կ'ապրիք. սակայն եթէ այս խառնակութիւնք կրկնուին, խիստ պատժոյ պիտի ենթարկուիք:

Հայ գաղթականութեան աչքը լոյս, ահա պաշտօնական զեկուցում մը որ շատ բան կ'ըսէ:

Բայց խնդիր է զխոնալ թէ Հայ ժողովուրդը արժանի էր այն ստորնացման զոր կրեց եգիպտական կառավարութեան առջև: Ոմանք կ'ըսեն՝ այո՛, ոմանք կ'ըսեն՝ ո՛չ: Յօգուածագիրս, ժողովրդեան զաւակ, կ'ըսեմ՝ ո՛չ. արժանի չէր: Արժանի չէր, վասնզի գրեթէ ոչինչ մաս ունենալով հանդերձ կիրակէ օրուան անճահ և անիմաստ ցոյցին մէջ, կոյր վասահութեան զեղծում կրեց թէ՛ զրգոխչներու և թէ՛ Գահիրէի Հայութեան ներկայացուցիչներուն կողմէն:

Գրգոխչները եթէ անկեղծութեամբ շարժել ուզէին, պարտէին եղելութիւնները չ'խեղաթիւրել և բոլոր պատասխանատուութիւնը չ'բեռնաւորել միմիայն անձի մը վրայ: Անոնց՝ յեղափոխականներուն՝ եթէ ճշմարտապէս քաղաքագէտ են (անհրաժեշտ յատկութիւն՝ աւելի խորամանկներուն ձեռքը ոչ գործիք եղող ազգաւե՛ր յեղափոխականներուն) առաջին պարտականութիւնն էր՝ եթէ կռահելու անկարող են՝ փնտռել և գտնել այն ազիտարեր հեռագրոյն շարժառիթը: Անոնք՝ յեղափոխականներ՝ իբրև քաղաքագէտ՝ հասկնալու էին որ գիււանագիտական պայքարներու մէջ կան վայրկեաններ ուր չէ թէ միայնակարը. հզօրին, այլ հզօրը տկարին առջև պարտի խոնարհիլ յանուն ազգասիրութեան, յանուն հայրենասիրութեան, յանուն մարդասիրութեան: Մարդկային կենաց մէջ և մանաւանդ քաղաքական ապարէզին մէջ կան պարագաներ, ուր ժողովրդեան մը պետը անձնազոհ չկրնար ըլլալ, եթէ հաստատապէս համոզուած է որ իր մահացումը կամ պաշտօնանկութիւնը փաստակար պիտի ըլլայ իր ժողովրդեան: Դասալիք զինուորի մը, դաւաճանի մը գործն է այդ:

Ո՛վ երբէք պիտի կրնայ ըսել թէ ինչէ՛ր անցան դարձան Երլարդի պալատին մէջ, մինչև որ այդ շարագէտ հեռագիրը ստորագրուեցաւ (եթէ յիմաւի ստորագրուեցաւ Պատրիարքին

կողմէն). եթէ կազ դեին աջակցութիւնը վայելէինք, ո՛վ գիտէ չ'ըսուի ազելարը տեսարանի մը ներկայ պիտի գտնուէինք. թերևս պիտի տեսնէինք Հայոց Պատրիարքը Սուլթանին առջև ծնրագրած, արտասուելով կը պաղատի որ զինք այդ վատ արարքին չբռնաբարէ, եթէ ո՛չ իր հրաժարականն ընդունուի: Իսկ միւսը՝ անողոք և միանգամայն ժրպտուն՝ ձեռքը դէպ ի Հայաստանի կողմերը ուզած:

— Կա՛մ՝ ստորագրութիւնդ կա՛մ մնացեալներուն բնաջնջումը:

Յեղափոխականաց յեղափոխականագոյնը ինչ պիտի ընէր այդ պարագային մէջ. իր համբաւը, պատիւը կորսնցնել պիտի ուզէր, թէ իր ազգը: Փառասէ՛ր պիտի ըլլար թէ ազգասէր:

Այո՛, այս և ասոր նման պարագաներ հազուադէպ չեն նոյն իսկ քաղաքակիրթ ազգաց քաղաքականութեան մէջ և ճշմարտա ու բանիբուն յեղափոխականք գիտեն զայդ, բայց թէ գիտնալով ինչո՛ւ ժողովրդէն կը ծածկեն, դա իրենց մէկ գաղտնիքն է:

Իբր անկողմնակալ՝ երկու խօսք ալ, պատրիարքին անհարկի և գիտմամբ դաւաճանութեան տեսակէտով:

Ի նկատի առնելու է որ դաւաճանութիւն մը այնքան աւելի կարևորութիւն կ'ստանայ, և այնքան աւելի կը գատապարտուի որքան դաւաճանը բարձր դասակարգի կը պատկանի: Հոս խնդիրը ո՛չ թէ Մաղաքիայի մը այլ ամբողջ ազգութեան մը գլխաւոր ներկայացուցիչն՝ պետին՝ վատ դաւաճանութեան վրայ է. ուրեմն պատիժն ալ՝ ենթարկուած զրկանաց, եղած կորուստին համեմատական ըլլալու է:

Սակայն հոս հարցում մը կուզայ գրչիս ծայրը: Քանի որ պատրիարքը ճանչցուած է իբրև ազգապետ, այդ յեղափոխականք ժամանակին՝ լա հէյի ժողովին առթիւ՝ գիմեցի՛ն իրենց պեւին և տնոր խորհուրդն ու հաւա-

նութիւնը ստացածն նկատմամբ այն ձեռնարկին, զոր կուղէին յաջողած տեսնել (*):

Եթէ սպասուած պատասխանը հաստատական է, այն ատեն Պատրիարքը քառասպատիկ յանցաւոր է, հակառակ պարագային, ըստ սրում Պատրիարքը իբրև անկարևոր և զանցառելի նկատուած է, անտեղի կը դանեմ՝ յարուցուած ազմուկն ու խառնակութիւնքը, առանց սակայն Պատրիարքը արդարացնելու: Նաև տեղն է հոս յայտարարելու որ յեզափոխականք ալ բոլորովին արդարանալի չեն գործելով առանց գէթ խորհրդակցելու ազգապետին հետ:

Վերջապէս Օրմանեան կամ յանցաւոր է կամ չէ. ստուգապէս ոչ ոք զիտէ ճշմարտութիւնը: Արդ օրէնքը կը պահանջէ որ հաստատական վճիռ տալէ ետ կենալու է հոն, ուր տարակոյս կայ:

Բացակայ եզոզ և թէ իր պաշտօնին և թէ՛ միջավայրին բերմամբ լուսթիւն պահելու հարկադրուած անձ մը ամբաստանել շատ դիւրին է: Ժողովուրդին պարտականութիւնն է վեհանձնօրէն շարժիլ, և յամբար շտապել այսգունակ պարագաներու մէջ, սպասելով որ ժամանակը պարզէ ամեն ինչ: Ազգասիրաց միտքը զբաղեցնելու և սիրտը բորբոքելու բաւականաչափ թուով՝ յայտնի և վկայեալ ազգադաներ ունինք մեր մէջ, հետեաբար կարծեցեալ դաւաճաններու ետեւէ իյնալ պարզապէս ժամավաճառութիւն է:

Այս կարճ տեսութենէն ետքը աւելորդ է ծանրանալ «յիշուի չյիշուի» ի մտամոլար խնդրոյն վրայ, ձեռքնհաս գրիչներ արդէն ձեռնարկած

են լուսաբանել այդ կէտը: Միայն սա կ'ուզեմ յաւելուլ որ անհասարական զգացումը երբէք բունարարուելու չէ: Ոչ սք իրաւունք ունի ազգադաւ կոչելու անձ մը, որ հակառակ գաղափարի կը ծառայէ յանուն այն ազատութեան, որով միտքը զայն կը քննադատէ: Միանգամ ընդմիջող գիտնալու ենք թէ ո՛ւր կ'երթանք, ազատութեան համար կը կուրինք, թէ պաղափարաց սարկութեան համար: Եթէ կրօնասէր ենք, զիտնալու ենք որ մարդու մը անուան պատարագի մէջ յիշուելով կամ չյիշուելով մեր ալօթքը աւելի կամ նուազ ընդունելի չըլլաք Ամենակարողին կողմէն, և եթէ անհաւատ եմք, մեզ ի՞նչ փոյթ անուան մը յիշուիլը կամ չյիշուիլը իսկ թէ որ բաղաբական նշանակութիւն մը կուտանք այդ արարողութեան, կը սխալինք: Քաղաքականապէս յաւաքանալու և զարգանալու համար ուրիշ լաւագոյն միջոցներ կը վխտան, անոնց դիմենք:

Պահիրէբնակ Հայոց վարիչներն ալ ի միտ աննելու են որ մէն մի պարագայի մէջ օստիկանութեան աջակցութիւնը ինդրել՝ ամենաչնչին բաներու ահազին կարևորութիւն տալով ժողովուրդը զրդուելու, իրենք զիրենք ստորնացնելու և ուրիշ ազգաց առջև ծաղր ու ծանակ ըլլալու, կառավարութեան կասկածանաց ենթարկուելու և վերջ ի վերջոյ ծանրածանր պատասխանատուութեանցներք մնալու ապահովագոյն ճամբան է:

Արգեօք ա՛յս է ուզուածը:

Պ.

ՄԱՀՏԻՈՒԹԻՒՆ

(ՍԼԱԹԻՆ ՓԱՇԱ)

Քանի մ'օրեր շարունակ խորհրդածնց իր տաքնապալի կացութեանը վրայ. չափեց ու կշռեց, յուշուեցաւ ու տատանեցաւ, հոգեւ

(*) Յիմար ըլլալու էին Լա Հէյի վեհաժողովին դիմողները, երբ չէին կրցած գուտակել քե՛ Պարբարք մը, նոյն իսկ ըլլաւ Իզմիրեան, չե՛ր կրնար գինգ կասկածի քակ դնել պաշտօնապէս կամ անպաշտօն, քանի որ յիւսնագիտական յարաբերութեանց մէջ գոյժ ճիշտ չ'կայ: Թ. Խ.

տանջ և ալեծուփ: Իսաչին սիրուն համար նա հատակուելու սուրբ ուխտովը գնացած չէր սև աշխարհը՝ և սակայն կ'զգար որ քրիստոսն հայ ծնած էր ինք, և ուրացողութեան՝ սրբան ալ աներևոյթս՝ պիղծ ուրուականը իր բոլոր սգեղութեամբ կը պատկերանար իր աչաց առջին. խղճի խայթը, կը խոշտանգէր իր զօրականի հոգին: Բայց ա'լ հնար չկար. կիցծիք կամ խորամանկութիւն՝ ահա՛ ընտրելի միակ միջոցը, իր բանակի համակրանքը վայելելու համար:

Կեղծիք, պժղալի՛ բառ, սրբան աղէտներ հասուցած չէ խեղճ մարդկութեան դիտուն՝ և սակայն որքան ալ բարիքներ, ինչ որ ըսի մերկայարանոց ուղղամտութիւնը չ'պիտի կարենար ընձեռել՝ մեղ մեղաւորաց այս աշխարհին մէջ: Կեղծիքն արդարև զէնք մ'է մարդկան ձեռքը, եթէ պատե՛հ ժամուն զորձածուփ: Սլաթին յաջողեցաւ այդ զէնքով. անով գտաւ իր ազատութիւնն ու անգնահատելի ծառայութիւն մը մատոյց իր երկրորդական հայրենիքին: Ու այսօր ազատ և երջանիկ, թող ապաշխարէ իր մեղքը, եթէ կարելի է մեղք անուանել աշխարհականի մ'այս արարքը:

Այդ, առաւօտ մը կանուխիկի՛ արշաղոյսի ծագման հետ, լուր դրփեց իր համհարզին որ բանակը զօրահանդէսի պատրաստէ, որուն ներկայ ըլլային դատաւորը, Ահմէտ վաս Պէշիբ և Մուհամմէտ Ահմէտ՝ բանակի փառաւոր Եանթուրաթը (յանձանձիշ): Հրամանը գործադրուելէ անմիջապէս յետոյ՝ երիվարը հեծաւ Սլաթին, շրջապատուած՝ արար սպայակոյտէն և պաշտօնականներէն և խօսքը ուղղելով զօրաց, ազգու ձայնիւ ու իր սրտին բոլոր գանուութիւնը ցոլացնող շեշտով մը.

— Զօրակա՛նք իմ, ըսաւ, գիտէք թէ ձեզ հետ էի միշտ, ամեն անգամ և ամենուրեք երբ վտանգը կ'սպառնար մեզ. վտանգը ինքնին պերճախօսութիւն մ'է թէ ի՛նչ է մարդ: Դուք քաջաբար կուտեցաք ինձ հետ ու չարչրիտեցաք, և մտահ եմ թէ, այս մահահրաւէր օրերուն մէջ չ'պիտի թերանաք ձեր զինուորական պարտուց անվթար գործադրութեան մէջ:

Զօրակա՛նք, մենք հոս պատերազմելու եկած ենք երկրին աւեր և մեր վեհապետ Խափփին՝ ինչպէս նաև մեր կենաց ապահովութեան համար: Ձեր ուրախութեան թէ արտօնութեան ժամերը իմն են և պետք է միշտ այսպէս ըլլայ. և թէպէտ ձեր հրամանատարն ըլլալու պատիւն ունիմ ես, կեանքս սակայն, այս չարազէտ օրերուն մէջ, բնաւ աւելի արժէք չունի ձերինն. — Այլահու եաթալփուլ օմրաք, Այլահ երէնալիք (Աստուած երկար կեանք տայ ձեզ) գոչեցին ներկաները: — Այլ ցաւ է ինձ սեսնել, թէ ձեր մէջ օտար և անհաւատ մը նը կատուած եմ ես: Ծննդաւայրս իսկապէս հեռու է թէպէտ, բայց ես օտար մը չ'եմ. ես անհաւատ մը չ'եմ: Ես ալ ձեզի պէս հաւատացեալ մ'եմ: Աստուած և մարդ վկայ թող ըլլան ինձ. «Աշհատու իննա լա իրահա իլլ Այլահ վա Մուհամմատ բասուլ Այլահ» (վկայ եմ զի չի՛ք այլ Աստուած բայց որ լին և Մուհամմէտ է առաքեալ Նորին):

Այս ճառախօսութիւնը հրդեհեց այդ մեղեանդ ունկնդիրներու սրտերը. համակրանաց ծափ ու գոչեր լսուեցան ամեն կողմէ, բարապիները վեր առնուեցան, սուխներ շողշողացին արևուն դէմ և զօրավարներ և սաշտօնականներ իրեն մերձենալով՝ շարհաւորեցին դէնք ձեռքի տաք սեղմումով մը: Այդ օրէն սկսեալ, Սլաթին Չերմ մուսլիմ մը նը կատուեցաւ բանակէն. ներկայ էր անոնց առօրեայ նաւազին և ի պատիւ այդ հանդէսաւոր օրուան հրամայեց իր թիկնապահներէ միոյն որ քոսն պարարակ եզ բաշխել տայ զօրքերուն և մէկ մէկ եզ՝ զօրապետներուն, իբր քարսուլա (մատաղ): Ու ամենքը կերան և վայելեցին խորոված միսը, զոհունակութեան օրհներգներ կարդալով այն երանելոյն որ այնքան առատաձեռնօրէն կը տօնէր իր բունշան...

Այո, հանգարտած են գայթակղեալ մտքերը, կենդանացած՝ թուլացած սրտերը: Պարտաճանաչութեան սուրբ զգացումը տակաւ կը վերածնի զօրականաց քով, որոնք այլևս ակնածանօք կը նային դէպ ի իրենց պետը: Սլաթին փաշա խաղաղ է ներքնապէս: Բայց

գուրը, քիչ մը հեռուն, Մահաին յառաջ-
խաղացութիւնը կը շարունակէ՝ բարբարո-
սութեան աշխարհաւեր հետքերը թողով
աջ և ահեակ. ամեն կողմ արեւն, ամեն
կողմ «ճէհաս»ի զիւային բացազանչութիւն-
ներ: Տխուր է Սլաթին: Տարիէ մ'ի վեր
բնաւ հազորակցած չէ մայրաքաղաքի հետ,
թէպէտ երբեմն շինծու հեռագիրներով ուշած
է ուրախ լուրեր տարածայնել բանակի մէջ
և շրջակաները, պղտոր մտքերն ապահու-
վելու համար: Միակ յոյսը՝ որուն իր բու-
լոր դառնացած հոգւովը կառչիլ կուզէ՝ Հիքս
փաշայի արշաւախմբի յաղթական գալուստն
է, որ իբր երկնային զինուորաց դաս մը
պիտի գայ հոգիներ փրկել: Խեղճ մարդ,
չգիտէ թէ ինչ քստիներ վախճան ունեցած
էր այդ վատաբախտիկ արշաւախումբն ալ:
Բայց ալ կարելի չէ յոյսերով օրորուիլ,
երբ կացութիւնը օր քան զօր ծանրակշիւ
կը դառնայ. պաշար և սպանութեքք տակաւ
հասնելու վրայ են. բանակը և բնիկները,
արդէն ձանձրացած՝ անվերջ և անստոյգ
սպասումէն, համակրանք ցոյց կուտան դէպ
ի Մահաին, որուն յաջողութեան վրայ-
այլևս կասկած չունին. մի քանի հարկւր
զօրքի դէմ թշնամոյն ահռելի թիւը կայ:
ահա՛ թշնամին: Տարա պաշարման մէջ է.
մահ կամ անձնատուր ըլլալ՝ ընտրեա՛ զօրն
կամիս:

Քիչ մը ժամանակ վատտիկու համար
Սլաթին հրամայեց Օմ-Տրամօ անուանեալ
արաբ հաւատարիմ շէյխի մը, որ իբր ինք-
նաբերաբար, առանց իր զիտութեան՝ թըշ-
նամոյն բանակատեղին երթայ և զինադա-
զար մը առաջարկէ Մատիպոյի:

Պատգամաւորը վերադարձաւ: Տերվիշնե-
րու բանակը բազմաթիւ է քան «գաստեզս
երկնից»: Մահաին ամեն կողմ վճռական
ճակատամարտի հրովարտակներ հանած է.
Մատիպո կը պահանջէ Սլաթինի պուր
իւ բոլոր մարդիկներով և կամ անձնատուր
ըլլալ:

1883 Դեկտեմբեր 23ի նախընթաց օրն
չ, ճրագալոյցի իրեկունն է: Երոպիոյ պայ-

ծառ երկնին տակ, հարկւրաւոր զանգակնե-
րու ներդաշնակ արծաթ զօղանջիւնը կ'ա-
ւտէ հաւատացելոց Յիսուս Փրկչի մը հրու-
շալի վայրաբերիլն յաշխարհ. ամեն տուն
իրախճանաց մէջ էր, խի հոն, Ափրիկի
մի հեռաւոր խորշը, անիծեալ հոգի մը վրայ,
քրիստոնեայ քաջարի զինուոր մ'է որ միտմինակ
և պարտուած, կրօնափոխութեան դիպակ
հարկին վերջ՝ անձնատուր կ'ըլլայ սևամոր-
թի մը...: Կարեկցիւնք անոր գէրագոյ-
թեանը: Մահ՝ հարկւր անգամ թեքս նա-
խամեծար համարէր այնպիսին, եթէ օր մի
վրիժառութեան հերոս մ'ըլլալու բնագրը
չ'ունենար:

Երկար ատեն իր ճակատագրին վրայ
դառնապէս ոչբաւ վերջ, բանակի հետ խոր-
հրդակցութեամբ հետեւեալ գիրը սւղղեց
առ Մահաին:

«Յանուն ամենողորմ Աստուծոյ.

«Ծառայ Տեառն Ապտ էլ Գաաբը Սա-
լաթին (Սլաթին) առ Սայիտ Մուհամմէտ
իլ Մահաի. Տէր պահեսցէ զինք և խոս-
վեցուցէ զթշնամիս իւր, ամէն:

Երկար ատենէ ի վեր հարկագրուած եմ
ձեզ վեմ պաշտպանել նահանգը զոր կա-
ռավարութիւնը յանձնած է ինձ, և սակայն
չեմ կարող հակառակիլ կամաց Նորին:
Ուստի այս գրութեամբ կը յայտնեմ թէ՛
կը հնազանդիմ աստուածային և Քոյնի կա-
մաց դաշամբ միայն որ Դու մերձաւորներդ
մին զրկես հոս՝ կառավարելու երկիրը զոր
իրեն յանձնելու արամաղիր եմ: Կուզեմ
որ երգնու թէ հպատակներուս՝ — այր, կին
թէ մանուկ — կեանքը պիտի խնայուի:
Մնացեալը Քու գթառաս մարդասիրութե-
նէն կախեալ է:

Ս. Օ.

Աղերսանդրիոյ La Réforme Լրա-
դիրն Սեպտ. 20, շաբաթ օրուան թի-
ւին մէջ, «Օրմանեան Պատրիարքն և
Հայ եկեղեցւոյ սիղբունքները» վեր-
նագրով շահեկան յօդուած մը, տե-
սանք որ «Արմենիա» ստորագրութիւն-

նը կը կրէ: Յօդուածագիրը պաշտպանելէ ետք ժողովրդական շարժումին օրինաւոր կողմը, կրօնական խնդիր մը կը նկատէ «Հյւնդուի» խնդիրը, և երբէք քաղաքական, ինչպէս ջանացած է ցուցնել Մուգաքթաւ իր «Հայկական խնդիրն յեզկատու» վերնագրով երկար և անճահ յօդուածով, զոր սակայն «Արմէնիս» չարաչար ջախջախած է, իբրև կասկածելի աղբիւրներէ քաղուած սուտերու շարք մը:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Միշտ միևնոյն անփոփոխ յանկերգն է որ կը լսուի ամեն կողմէ. անիրաւութեան յաղթանակը: Չարին ու բարւոյն յաւիտենական պայքարին մէջ՝ երբեք այնքան մեծ չէ եղած շարին յաջողութիւնը՝ որքան մեր օրերը: Այնպէս կը թուի թէ այս գործովերջին մէջ ուր ամեն ինչ քառու է, ամեն ինչ քայքայում, խաւար, աւեր և մահ, մարդկութիւնը ամբողջ գաաապարտուած է անյարիր ու անպարմանելի անկումի մը: Այնպէս կը թուի թէ ծայրայիղ նրբութեան հասած քաղաքակրթութիւնը կործանելու վրայ է այնպիսի յեղաշրջումով մը՝ որ մեզ վերստին պիտատանի բարբարիի գարերու գազանութեանց: Երբ մէկ կողմէ մարդիկ զիրար կը բզբռեն, ուժգին թափով էրարու վրայ կ'իյնան է՛ն վատթար ապերտանութեանց մէջ՝ այն միևնոյն հպարտութեամբ որով երբեք իրենց սուրբը պատեանէ կը հանէին նուիրական գատի մը համար, միւս կողմէ բնութիւնը կարծես պաշտակցութեամբ կը գործէ Մարդ-Սնասունին և ամենէն վայրագ բնագոյներուն հետ. ահա՛ ժանտախտը աշխարհի գրեթէ ամեն մասերու մէջ, սով՝ Հնդկաստանի ու Եգիպտոսի մէջ. ողորումներ՝ կեկրոնական Եւրոպայի մէջ, երկրաշարժ և թշուառութիւն ամեն կողմ:

Այս տարապայման այլ բնական պատուհաններուն վրայ կ'աւելնան մարդոց շրջաթայգերն կիրքերը. Ովկիանիոյ մէջ՝ փոփոխանք կը շարունակեն ընդունիլ ամերի-

կեան սուտերը: Այս մեծ ազգը, ուր կ'երթան ապաստան փնտրելու բոլոր վտարանդի ազատութիւնները, Սպանիոյ երեսին գարնելէ յետոյ իր գաղթականութեան զէմ մշած անարդար պատերազմը՝ կը հետևի միևնոյն ճամբուն և ինչ որ Սպանիոյ համար ամօթ կը համարուէր՝ փառքի սիտղոս մը պիտի կազմէ անշուշտ Ամերիկայի համար: Մարդկային անտրամաբանութիւն:

Ֆրանսայի մէջ ցեղային պատերազմ մըն է որ իրարու զէմ կը հանէ երկրին առոյգ և կենսունակ ուժերը. Սակայն չիտարւինք. Տրէյֆիւս՝ մեղապարտ կամ անմեղ՝ խնդրոյն մէջ չմաներ. Տրէյֆիւս գատապարտեալ մը չէ, այլ զրօշակ մը, անձնաւորեալ յուպայութիւնը, ինչպէս էր երբեք թափառական հրեան. Իտալիի Լուքտեմ ինք առանձին իր գլխուն վրայ հաւաքած էր Իտալիէի բոլոր մեղքերը: Միթէ այն Ֆրանսա՞ն է այս որ՝ որ քիչ առաջ՝ զեռ բարձր ու հաստատ կը բռնէր բոլոր վեհամ ձևութեանց, բոլոր մեծ զգացումներու զրօշակը:

Սակայն գատապարտեալ Տրէյֆիւս միութիւն մըն է լոկ. հապա ի՞նչ ըսել անկլիական ազգին որ՝ կլատութօնի խրոխտ ու սեղ ձայնէն ներշնչուած՝ իր սուրբ կը գործածէր ի նպաստ արդար գատերու: Այժմ որ ոչ ևս է կլատութօն, Անկլիա կ'արգահատի, ի դուրս կը շարժի երկիցս պապարտելի հրէի մը ճակատագրին վրայ և յօժարախամ կը փակէ իր աչերը. Հայաստանի շարդերուն ահռելի տեսարանին առջև: Նահատակներու արիւնհեղութիւնը զոր կարմիր-Սուլթանը չգազրիր բնծայելէ իր անյազուրդ անգթութեան, միշտ կը շարունակէ՝ ո՛չ մէկ եղբայրական ձայն կը լսուի աւերակ ու անապատ գարձած հայկական քաղաքներուն մէջէն: Թիւրքը և քիւրաք մեր ջախջախուած գլուխներուն վրայ կը շողացնեն իրենց արիւնաշագախ սուտերը ու մեր գլուխները կ'իյնան առանց՝ զըրգուելու ո՛չ մէկ կողմ գայրոյթի ամենափոքր սարսուռ մը: Մի գուցէ մարդկային մեծ-զգացումները սնանկացած ըլլան:

Ի զուր կոչում ըրինք մեծ սկրութեանց, ի զուր թափեցաւ մեր արիւնը, ի զուր ջանացին հայ լրագրիները համակրութիւններ

արթնցնել... Առանձին ենք և մենք մեր վրայ պէտք է դնենք մեր յոյսը:

Իրաքանչիւր ազգ որս մը կը փնտռէ լափելու. չիտացի մը, ափրիկեցի մը, Պօկը մը, փիլիպեցի մը, Գուպացի մը, Հրեայ մը, Ազատ-որհնայի մը, Քրիստոնեայ մը, Հնդկի մը, Գորեացի մը, Յոյն մը, Եսփուսացի մը կամ Հայ մը: Կեանքի պայքարն է այս իր ամենէն քստաբեկ ձեւին մէջ: Հետեւինք, օրինակի համար, Թրանսօլապի ցեղերուն որոնք գիտեն իրենց մէջ գտնել բաւական կորով և զօրութիւն յարգել սալու համար իրենց անկախութիւնը, գիտալով հանդերձ թէ՛ իրենց հակառակորդն է բրիտանական վիթխարի կայսրութիւնը:

Լ Ր Ա Ք Ա Ղ

Ուսումնական դեսպանատան թղթատարները կը մեկնէր անճահ պատրուակով մը արգիլուեցաւ ոստիկանութեան և տարուեցաւ Բերայի կառավարութեան, բայց ճամբան յաջողեցաւ պրծելու և ապաստանելու ռուսական դեսպանատան մէջ:

Գ. Զենովիեվ ազդու բողոք մ'ուղղեց Սուլթանին իրաւանց այս բռնարարումին դէմ:

Թուրքիան բաշա, Ահմէտ Ռեֆիգ պէյ, Ներքին գործոց խորհրդական և Արթին բաշա ճատեան կը կազմեն յանձնախումբը որ ամեն օր նիստ կ'ընէ Երևանի մէջ Հայոց Պատրիարքարանի զանգատները բնեկիւ համար:

Գ. Արսէն Շապանեան Կարմեցի, Ժամբօլ Լեւրէնսի աշակերտ, նշանաւոր նկարիչ մ'է: Չկնորսները գեղեցիկ գործ մ'է: Իր Լուսնկան Ավիլանին վրայ, Յուդահանգիսի ամենափափուկ նկարչական կտորներէն մին է: Փառք Հայ մկարչին:

Քրիստոնեայ Ֆրանսայէն պէտք էր հասնիլ Հայոց օգնութիւն ու փրկութիւն: Բայց այսօրուան Ֆրանսան կախարդ քաղաքականութեան մը մէջ փակուած է: Պէտք է յուսահատիլ: Ո՛հ, ոչ. երկինքը կընայ այսօր փոխել ամեն բան, քանի որ Ֆրանսական հոգիին խորը դիւցազնութիւնը կը մնչէ:

Ֆրանսայի առևտրական ծեռարուեստական, թղթատարի և հեռագրատան գործոց մախարարութիւնը, որուն յանձնած է ընդհ. Տնօրէնութիւնը 1900ի տիեզերական Յուդահանգիսին, զՏիար Զերազ հրա-

ւիրած է մասնակցելու կրօնից պատմական միջազգային Գօնկրէիմ աշխատութեան, որ պիտի գումարուի 1900 Մեպտ. 3-9, Սօրպօնի Բարձրագոյն Ուսմանց գործնական վարժարանին կրօնային գիտութեանց ճիւղին ուսուցիչներուն նախածնունդութեամբ:

— Հայասէր աշի հրապարակազիր մը, Պ. Օկիլեսթ Պէմար, կը գրէ Իւնիօն Նասիօնի մէջ. «Ուրախ ենք իմանալ թէ՛ 5 տարիէ ի վեր մեր մղած Ս. պատերազմը Հայաստանի դանձին դէմ, վրդովը ձգած է Սուլթանի սև հոգիին մէջ և կը յուսանք թէ՛ շատ չ'տևեր մեր խորին համոզումն ու փափագը պիտի պահուի յաղթանակով:

— Լահէյէ կը գրեն Թանիմ Մեպտ. 15ին. «Տօգու. Քուլիյըր օրուան առկումն է դարձեր: Հարկադրած է Արտաքին գործոց նախարարը պարսաւ մը նետել Բէթրսպուրկի հօլանտական դեսպանին երեսին, որ ասոր վրայ, հրաժարականը տուած է: Հակայն դափնիական խոյնեանը՝ փայլուն կերպով պաշտպանեց Հայերն ու նախագահեց Տիար Զերազի Ամուլէրտամի Լսարանին: Այս Լսարանները տեղի ունեցան աւելի շքեղօրէն և տասնակատիկ արձագանգ տուին»:

— Չայն Հայրենեաց, յաջորդ Տիգրիսի, կը յայտարարէ թէ Ամերիկայի մեր հայրենակիցները պիտի մասնակցին մեծամունտ Տիար Մատթէոս Մամուրեանի հրապարակագրութեան յիսնամեակի հանդէսներուն որք տեղի պիտի ունենան ամսոյս 29ին յ'Իզմիր:

— Տիգրանակերտի Նահանգապետը բանտարկել տուած է տեղւոյն Տ. Եզեկիէլ վարդապետը, գորկամբաստանէ յեղափոխականները չ'մատնելու յանցանքով:

— Դետրոս Ամմեղեան Ահմէտ Ճէլալէտին բաշայի դիմած է Սուլթանէն ստանալու համար Կ. Պոլիս վերադառնալու հրամանը: Այս ընթացքը դատապարտելով Լ'Արմենի իր սիւնակները կը փակէ այդպաշխատող ու անվտանգելի աշխատակցին առջև:

Ստոյանք Վառնայէ Տիար Յ. Կ. Պօնուզեանի Նոր Ընթերցարանը, գիրատոյց ու հրահանգիչ մէթոտով պատրաստուած, գինն է 60 օանդիմ, դպրոցներու և առնուաղն 20 օրինակ գնողներուն հաւար 15% զեղչ:

Կը յանձնարարենք ույն օգտակար գատողիքն աշատահանի բոլոր վարժարանաց համար. Վոտահ ենք թէ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ:

Le Gérant, J. MUNIER